



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու բոլոր անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը և Գլաձորի
համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի
Հովհաննիսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝
Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 9
արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 9 արտահերթ նիստի
օրակարգը հաստատելու մասին:

2. Գլաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ա
որոշմամբ հաստատված կարգի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու
մասին:

| | | |
|---------|-------|-----------|
| Կողմ-11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---------|-------|-----------|

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84/

Լսեցին.

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 45-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 3-րդ մասի դրույթներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 45-Ա որոշմամբ հաստատված կարգի՝

1. 12-րդ կետի բովանդակությունը շարադրել ստորև նշված նոր խմբագրությամբ.

«12. Համայնքի ավագանին սույն կարգով նշված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց, բացառությամբ սույն կարգի 18.2-րդ կետով սահմանված դեպքերի, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր խնդրի լուծման հարցը քննարկում է միայն սույն կարգի 13-րդ կետում նշված սոցիալական օգնության տրամադրման հանձնաժողովի եզրակացության դեպքում և քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր խնդրի լուծման իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ, իսկ 18.2-րդ կետով նախատեսված աջակցությունը տրամադրվում է համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:»:

2. 18.1-րդ կետից հետո լրացնել նոր 18.2-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«18.2 Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրության ժամանակ մարտական գործողությունների հետևանքով զոհված զինծառայողների ընտանիքներին ցուցաբերել միանվագ դրամական աջակցություն՝ 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:»:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Նիստին ներկա ավագանու անդամներ՝

ԱՐՄԵՆ ԳԱՐԻԻԵԼՅԱՆ

ՔԱԶԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ




